ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ և ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ И НАУКИ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

НАЦИОНАЛЬНЫЙУНИВЕРСИТЕТ
А Р Х И Т Е К Т У Р Ы И
С Т Р О И Т Е Л Ь С Т В А А Р М Е Н И И

ЦЕНТР ПО ОБЕСПЕЧЕНИЮ КАЧЕСТВА
ОБРАЗОВАНИЯ

MINISTRY OF EDUCATION AND SCIENCE OF THE REPUBLIC OF ARMENIA

N A T I O N A L U N I V E R S I T Y O F ARCHITECTURE AND CONSTRUCTION OF ARMENIA

C E N T E R O F E D U C A T I O N Q U A L I T Y A S S U R A N C E

---

7 մայիսի 2016թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2016 թվականի ապրիլ ամսին անցկացված՝ վարչական անձնակազմի հարցման

1. Նախաբան

Համալսարանի վարչական անձնակազմում ընդգրկված են՝ ռեկտորը, պրոռեկտորները, դեկանները, ամբիոնի վարիչները և համալսարանի կառուցվածքում ընդգրկված մյուս ստորաբաժանումների աշխատակիցները:

Համալսարանի վարչական անձնակազմը ներառում է 110 աշխատակից:[1]

Հարցմանը մասնակցել են 102 աշխատակիցներ: Հարցմանը ներգրավվել են ընդհանուր թվով 18 ստորաբաժանում/բաժին և 5 դեկանատներ:

Հարցումը անց է կացվել 39 հարցեր պարունակող «անանուն» հարցաթերթի միջոցով (կից ներկայացվում է Հավելված 1-ում), որոնցից 9-ը՝ կենսագրական բնույթի, 3-ը՝ «բաց» (նկարագրային), իսկ մնացած 27-ը՝ «փակ» («այո» կամ «ոչ» պատասխաններ պահանջող) հարցեր էին:

2. Հարցման նպատակը

Հարցումն անց է կացվել հետևյալ նպատակներով.

ա/ պարզել, թե վարչական անձնակազմը որքանով է բավարարված իր աշխատանքային պայմաններից՝ ծանրաբեռնվածության, կոլեկտիվում տիրող մթնոլորտի, կարիերայի աճի, աշխատանքի դիմաց ստացվող փոխհատուցման, վերապատրաստման հնարավորությունների, էթիկայի կանոններին համապատասխանող վարքագծի ապահովման և այլ տեսանկյուններից,

բ/ բարելավել վարչարարական գործունեությունը և բարձրացնել դրա

[1] Տվյալները տրամադրվել են համալսարանի կադրերի բաժնի կողմից

արդյունավետությունը բուհում՝ հարցման արդյունքում ձևավորված առաջարկությունների հիման վրա:

3. **Հարցման գործընթացի կազմակերպում**

Հարցման գործընթացը ներառել է հետևյալ փուլերը.

ա/ հարցաթերթի մշակում, քննարկում և հաստատում.
բ/ հարցվողների (ռեսպոնդենտների) ցուցակի ձևավորում,
գ/ հարցումների անցկացման ժամանակացույցի մշակում,
դ/ հարցումների անցկացում,
ե/ հարցման արդյունքների ամփոփում և հաշվետվության կազմում:

ա/ Հարցաթերթի մշակում, քննարկում և հաստատում

Հարցաթերթը մշակվել է համալսարանի Կրթության որակի ապահովման կենտրոնի (այսուհետ՝ Որակի կենտրոն) աշխատակիցների կողմից՝ նմանատիպ հարցումների անցկացման միջազգային առաջատար բուհերի փորձի հիման վրա, հիմքում դնելով այդ հարցումներում կիրառված հարցաթերթերի նմուշները: Ձևավորված հարցաթերթը քննարկվել է վերին օղակի վարչական անձնակազմի (ռեկտորի, պրոռեկտորների, դեկանների) հետ, որից հետո հաստատվել է որպես վերջնական տարբերակ:

բ/Հարցվողների (ռեսպոնդենտների) ցուցակի ձևավորում

Հարցվողների (ռեսպոնդենտների) ցուցակը տրամադրվել է Կադրերի բաժնի ղեկավարի կողմից:

գ/ Հարցումների անցկացման ժամանակացույցի մշակում

Որակի կենտրոնի աշխատակիցները՝ հարցվողներից համաձայնություն ձեռք բերելով՝ կազմել են հարցումների անցկացման ժամանակացույցը:

դ/ Հարցումների անցկացման ընթացքը

Հարցումներն անցկացվել են Որակի կենտրոնի աշխատակիցների կողմից: Նրանք ներգրավվել են հարցման գործընթացում փոքր (1-2 հոգուց բաղկացած) խմբերով: Յուրաքանչյուր փոքր խումբ կցվել է առանձին վարչական ստորաբաժանմանը և անցկացրել հարցումն՝ ըստ ժամանակացույցի:

Հարցումներն անց են կացվել՝ ղեկավարվելով Որակի կենտրոնի աշխատակիցների կողմից նախապատրաստական փուլում ձևավորված դրույթներով, որոնք ներառում էին հետևյալ հարցերը.

- ի՞նչպիսի ներածական խոսքով սկսել հարցման գործընթացը,
- ի՞նչպիսի պահվածք դրսևորել հարցումն անցկացնելու ընթացքում,
- ի՞նչպես պատասխանել տրվող հարցերին,
- ի՞նչպիսի եզրափակիչ խոսքով ավարտել հարցման գործընթացը,

- ի՞նչպես ներկայացնել հարցման արդյունքներից բխող սպասումները:

Ե/ Հարցման արդյունքների ամփոփում և հաշվետվության կազմում

Հարցումների գործընթացը ավարտելուց հետո՝ Որակի կենտրոնի աշխատակիցները թվայնացրեցին հարցաթերթերից ստացված տվյալները (Հավելված 2-ի Աղյուսակ 1): Լրացված հարցաթերթերի բնօրինակները պահպանվում են Որակի կենտրոնում: Թվայնացված տվյալների հիման վրա իրականացվեց վերլուծություն և կազմվեց սույն հաշվետվությունը:

5. Հարցման արդյունքների քննարկում և առաջարկությունների ձևավորում

Հարցման արդյունքները նախատեսվում է զեկույցի տեսքով ներկայացնել համալսարանի Ռեկտորին՝ հետագա առաջարկությունների մշակման նպատակով:

6. Առավել ուշագրավ հարցերին ստացված պատասխանների գրաֆիկական վերլուծություն

Գծ. 1. Պատասխանների բաշխումը.

Հարց 14. «Ես ծանոթ եմ ԲՈՒՀ-ի առաքելությանն ու ռազմավարությանը»,

Հարց 15. «Ես ծանոթ եմ իմ գործունեությանն առնչվող կանոնակարգերին»,

Հարց 17. «Իմ աշխատանքային ծանրաբեռնվածությունը համապատասխանում է սահմանվածին»



Գծ. 2. Պատասխանների բաշխումը.

Հարց 18. «Ես ունեմ բոլոր միջոցներն ու ռեսուրսները իմ աշխատանքը որակյալ և արդյունավետ կատարելու համար:»,

Հարց 19. «Համալսարանի լաբորատորիաների հագեցվածությունը նպաստում է ուսումնառության արդյունավետության բարձրացմանը:»,

Հարց 20. «Իմ գիտելիքները և փորձառությունը համապատասխանում են իմ աշխատանքին:»



Գծ. 3. Պատասխանների բաշխումը.

Հարց 22. «Համալսարանը հնարավորություններ է ընձեռում վերապատրաստման և մասնագիտական զարգացման համար»,

Հարց 23. «Համալսարանում ունեմ կարիերայի աճի հնարավորություն»,

Հարց 24. «Կարիերայի աճի և աշխատավարձի բարձրացման համար առկա են հավասար և արդար պայմաններ»



Գծ. 4. Պատասխանների բաշխումը.

Հարց 25. «Ես գոհ եմ իմ աշխատավարձից և տրամադրվող այլ նյութական օժանդակություններից»,

Հարց 26. «Իմ աշխատավարձը համապատասխանում է իմ աշխատանքային պարտականություններին»,

Հարց 27. «Իմ անմիջական ղեկավարը կառուցողական և քաջալերող մոտեցում ունի աշխատանքիս նկատմամբ»



Գծ. 5. Պատասխանների բաշխումը.

Հարց 28. «Ղեկավարս խրախուսում է երկուստեք հաղորդակցությունը»,

Հարց 29. «Իմ աշխատանքին վերաբերող որոշումների կայացման ընթացքում ունեմ արտահայտվելու հնարավորություն»,

Հարց 30. «Իմ աշխատանքին առնչվող որոշումների մասին ժամանակին եմ տեղեկանում»



Գծ. 6. Պատասխանների բաշխումը.

Հարց 31. «Համալսարանին առնչվող ընդհանուր որոշումների մասին ժամանակին եմ տեղեկանում»,

Հարց 32. «Համալսարանում բոլոր աշխատակիցների հանդեպ հավասար և հարգալից վերաբերմունք է ցուցաբերվում»,

Հարց 33. «Առկա է թիմային աշխատանքի և համագործակցության ոգի»



Գծ. 7. Պատասխանների բաշխումը.

Հարց 34. «Խնդրահարույց հարցերը լուծվում են անաչառորեն»,

Հարց 35. «Համալսարանում որոշումների կայացման գործընթացը հասկանալի է և թափանցիկ»,

Հարց 36. «Համալսարանի ղեկավարության ջանքերը նպաստում են աշխատանքային պայմանների բարելավմանը»



7. Վարչական անձնակազմի պատասխանները՝ «Համալսարանում ինձ ամենից շատ դուր է գալիս» հարցին

«Համալսարանում ինձ ամենից շատ դուր է գալիս» հարցին (Հարց 37) վարչական կազմի 102 հարցվողներից՝ պատասխանել են 77 հարցվողներ, և ընդհանուր առմամբ տրվել է 124 պատասխան: Նրանց կողմից նշված դրական կողմերը ներկայացված են Աղյուսակ 1-ում.

Աղյուսակ 1. «Համալսարանում ինձ ամենից շատ դուր է գալիս» հարցին (Հարց 37) տրված պատասխանները

	Նշված դրական կողմերը	Կրկնվելու հաճախական ությունը
1.	մարդկային ռեսուրսների պոտենցիալը	1
2.	կրթության բարելավման ընթացքը, միջոցառումները	3
3.	զարգանալու, գիտելիքներ ձեռք բերելու հնարավորությունը	2
4.	փոփոխություններ կատարելու նախաձեռնությունները, բարեփոխումները	8
5.	աշխատանքային բարենպաստ պայմանները, մթնոլորտը, միջավայրը, ռեսուրսները	29
6.	ամեն ինչ	2
7.	ռեկտորի, ղեկավարության աշխատանքը	10
8.	կոլեկտիվը, մարդկային փոխհարաբերությունները, թիմային աշխատանքը, ոգին	9
9.	համագործակցությունը	1
10.	առկա մոդելի ասոցացումը հայկական ընտանիքի մոդելի հետ	1
11.	լաբորատորիաները, նյութական բազան թարմացնելը, վերանորոգումները, մեծածավալ շինարարական աշխատանքները	9
12.	շփումը երիտասարդ մասնագետների և ուսանողների հետ	2
13.	սպասարկումը, բարյացակամ վերաբերմունքը	3
14.	ուսանողների դիրքորոշումը և հետաքրքրվածության աճը	2
15.	անաչառ վերաբերմունքը	1
16.	իմ աշխատանքը	5
17.	կարգ ու կանոնը	2
18.	աշխատանքային և շենքային պայմանները	1
19.	դասախոսների որակը և սրտացավությունը աշխատանքի նկատմամբ	2
20.	միջազգային կապերը, համագործակցությունը	3
21.	ուսանողական խորհուրդը	4
22.	ղեկավարության աջակցությունը երիտասարդ կադրերին	2
23.	ազատ արտահայտվելու հնարավորությունը	1
24.	աշխատել և շփվել ուսանողների հետ	1
25.	երիտասարդ գիտնականների խրախուսումը	1

26.	ղեկավարների հավասար վերաբերմունքը աշխատակիցներին	1
27.	իմ գիտելիքների և փորձի հետ հաշվի նստելը	3
28.	զանգի մեղեդին	1
29.	խնդրահարույց հարցերի լուծման հետևողականությունը	2
30.	ուսանողների համար աշխատանքի տեղավորման հնարավորությունը	1
31.	կարիերայի աճի հնարավորությունը	1
32.	աշխատանքի գրաֆիկը	2
33.	կազմակերպվող ցուցահանդեսները, գիտաժողովները	1
34.	ուսանողների մարդկային որակը, հարգալից վերաբերմունքը	1
35.	աշխատասենյակները, տեխնիկական հագեցվածությունը	1

8. Վարչական անձնակազմի պատասխանները՝ «Համալսարանում ես կառաջարկեի բարեփոխել /իրականացնել» հարցին

«Համալսարանում ես կառաջարկեի բարեփոխել /իրականացնել» հարցին (Հարց 38) վարչական կազմի 102 հարցվողներից՝ պատասխանել են 63 հարցվողներ և ընդհանուր առմամբ տրվել է 98 պատասխան: Նրանց կողմից նշված բարելավման ուղղությունները ներկայացված Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. «Համալսարանում ես կառաջարկեի բարեփոխել /իրականացնել» հարցին (Հարց 38) տրված պատասխանները

	Բարելավման ուղղությունները	Կրկնվելու հաճախականությունը
1	աշխատանքային և ուսումնակրթական միջավայրը	1
2	ուս. ծրագրում ավելացնել ընտրովի առարկաների ցանկը	1
3	բացահայտել ուսանողների խնդիրները, արտահոսքը նվազեցնելու համար	2
4	համագործակցությունը, փոխհարաբերությունները ստորաբաժանումների, մարդկանց միջև	7
5	աշխատելառճը, յուրաքանչյուրի մոտեցումը աշխատանքի նկատմամբ	2
7	օտար լեզուների իմացության բարձրացում	3
8	գիտնականների SCOPUS համակարգում ընդգրկում	1
9	իրավագիտության բարձրացման միջոցառումներ	1
10	վճարման պայմանները, աշխատավարձը	7
11	էթիկայի մակարդակը, որոշ աշխատողների կրթության մակարդակը	3
12	ծանոթով գնահատական ստանալը	1
13	այլ երկրների համապատասխան պաշտոնյաների հետ շփում, փորձի փոխանակում	2
14	համալսարանի կայքէջը	1
15	բարելավել կրթական, բակալավրի ծրագրերը, չափորոշիչները	2

16	վերանայել պրակտիկայի ժամկետները, արդյունավետությունը	2
17	ապահովել իրավական ակտերի կատարումը	1
18	բարձրացնել դասախոսների պատասխանատվությունը	1
19	Ճաշարան, բուֆետ, սուրճ, հանգստի անկյունի կազմակերպում, սպորտային մեծ դահլիճ	12
20	Արգելել ծխելը	1
21	խրախուսել ուսանողների թիմային աշխատանքը	1
22	մշակել ակտիվ աշխատակիցների խրախուսման մեթոդներ	1
23	դասախոսների վերապատրաստում ամեն տարի	2
24	կադրային բարեփոխումներ	1
25	կատարել դասալսումներ	3
28	քնարկումներ՝ հուզող հարցերի շուրջ	1
29	տարբեր ոլորտների մրցույթների կազմակերպում	1
30	աշխատանքային պարտականությունների ճշտում՝ պաշտոնի անձնագրերի միջոցով	1
31	արհմիութենության գործունեության հաշվետվություն՝ եռամսյակային	2
32	աշխատանքային սենյակների բարելավում	1
33	վերադարձնել նախկին զանգը	1
34	բարձրացնել ստորաբաժանումների, հատկապես ամբիոնների և ֆակուլտետների ինքնուրույնությունը,	1
35	ունենալ աշխատողի զարգացմանը միտված հստակ կադրային և սոցիալական պատասխանատվության գիտակցված քաղաքականություն,	3
36	սանհանգույցի մաքրությունը	1
37	ուսումնական պրոցեսում որոշակի փոփոխություններ, որպեսզի ուսանողները ընթացքում ավելի շատ աշխատեն, քան վերջին մի քանի օրը	1
38	առաջարկում եմ մեծ ուշադրություն դարձնել բնագիտական առարկաներին	1
39	ներգրավել նոր առարկաներ նյութերի մոդելավորման հետ կապված	1
40	ավելի բարեկարգ և տաք լսարաններ	1
41	ավելի շատ ժամ հատկացնել մասնագիտական առարկաներին	1
42	աջակցել գիտնականներին՝ ի կատար ածելու իրենց մտահաղացումները	1
43	առավել ուշադրություն դարձնել ուսանողների գործնական աշխատանքներին	1
44	բարելավել համակարգչային ծառայության պայմանները և ապահովել համացանց համալսարանի ամբողջ տարածքում	2
45	իրականացնել ուսումնական ծրագրերի պարբերաբար թարմացումներ, վճարելով այդ ծրագրերի հեղինակներին՝ լրացուցիչ աշխատանքի համար	1
46	դասախոսների և վարչական աշխատողների համար օտար լեզուների, մասնավորապես անգլերենի անվճար դասընթացներ	1
47	բարեփոխել ուսանողների գնահատման առկա համակարգը,	2
48	ավելորդ թղթաբանության բացառում	1
49	աջակցել ուսանողներին աշխատանքի տեղավորման հարցում	1
50	արագացնել միջազգային համագործակցությունը	1
51	հիմնել էքսպերիմենտալ/ շարժական/ ստացիոնար լաբորատորիաներ	1
52	բարելավել համալսարանի հետնաբակը	2
53	համալսարանում վերելակի կառուցում	1
54	կադրերի երիտասարդացում	2

55	աշխատանքի վերապատրաստման գործընթաց	1
56	հանրակացարանային համալիրի զարգացում	1
57	մտցնել սելեկտիվ քարտային համակարգ (տուրնեկետեր)	1
58	ուսանողական պրակտիկան ուղղել հասարակությանը օգնություն ցուցաբերելու ուղղությամբ	1

9. Վարչական անձնակազմի պատասխանները՝ «Գործունեությունս բարելավելու համար հետևյալ վերապատրաստումների կարիքն ունեմ» հարցին

«Գործունեությունս բարելավելու համար հետևյալ վերապատրաստումների կարիքն ունեմ» հարցին (Հարց 39) վարչական կազմի 102 հարցվողներից՝ պատասխանել են 48 հարցվողներ և ընդհանուր առմամբ տրվել է 67 պատասխան: Նրանց կողմից նշված վերապատրաստումների կարիքները ներկայացված Աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3. «Գործունեությունս բարելավելու համար հետևյալ վերապատրաստումների կարիքն ունեմ» հարցին (Հարց 39) տրված պատասխանները

	Վերապատրաստումների կարիք	Կրկնվելու հաճախակա-նությունը
1	կրթական գործընթացների կազմակերպմանն ու կառավարմանն առնչվող ժամանակակից մեթոդներ	2
2	մասնագիտական շարունակական զարգացում	2
3	լեզուներ	22
4	օրենսդրական, իրավագիտական	2
5	ղեկավարման, կառավարման հմտություններ	2
6	հարկային օրենսդրություն	1
7	համակարգչային հմտություններ	12
8	փորձի փոխանակում, նաև միջազգային	9
9	դասընթացներին առնչվող և մասնագիտական վերապատրաստումներ	2
10	մասնակցություն մասնագիտական ֆորումների, կոնֆերանսների, գիտաժողովների	2
11	ասպիրանտներին ղեկավար լինելու համար վերապատրաստում	1
12	գիտական ոլորտում անցկացվող գիտաժողովներին մասնակցելու հնարավորություն ունենալ	1
14	թվայնացման աշխատանքներին ուղղված	1
15	սեմինար կրթության ոլորտում նոր օրենքների և կարգերի վերաբերյալ	2
16	ադմինիստրատիվ ռազմավարությանն առնչվող ծրագրեր	1
17	հաղորդակցման հմտություններ	1
18	մուդլ ծրագրի ներդրում	1
19	արդի տեղեկատվական համակարգեր	1
20	խմբագիրների որակավորման բարձրացում	1
21	թարգմանիչների որակավորման բարձրացում	1

Հավելված 1. Վարչական անձնակազմի հարցման հարցաթերթ

Հարցաթերթ՝ համալսարանի վարչական անձնակազմի հարցման

1. Համալսարանում աշխատանքի ընդունվելու տարին՝ _____ թ.

2. Տարիքը՝ 1 մինչև 35 տարեկան 2 36-45 տարեկան 3 46-63 տարեկան 4 63 տ-ից բարձր

3. Սեռը՝ 1 իգական 2 արական

4. Դուք հանդիսանում եք՝
   1 լրիվ դրույքով, հիմնական աշխատակից
   2 կես դրույքով, հիմնական աշխատակից
   3 Այլ, նշել _____

5. Ձեր գործունեության ոլորտը՝ _____

6. Դուք դասավանդու՞մ եք՝ 1 այո 2 ոչ

7. Եթե այո, ի՞նչ դրույքով՝ 1 լրիվ դրույքով 2 կես դրույքով 3 Այլ, նշել _____

8. Ձեր կրթությունը՝
   1 Միջին մասնագիտական 2 Բակալավր կամ համարժեք
   3 Մագիստրոս կամ համարժեք 4 Գիտություններիթեկնածու, դոկտոր
   5 Այլ, նշել _____

9. Նշեք այն օտար լեզուները, որոնցազատտիրապետումեք՝
   1 Ռուսերեն 2 Անգլերեն
   3 Այլ, նշել _____

10. Արդյոքհամաձա՞յնեք հետևյալ պնդումների հետ.

		Լիովին համաձայն եմ	Մասամբ համաձայն եմ	Մասամբ համաձայն չեմ	Բոլորովին համաձայն չեմ	Չեմ կարող ասել
11.	Ընդհանուր առմամբ, ես բավարարված եմ համալսարանում իմ աշխատանքով և աշխատանքային պայմաններով:	(1)	(2)	(3)	(4)	(0)
12.	Աշխատանքի ընդունվելիս, ինձ աշխատանքին նախապատ-րաստվելու գործընթացը լիարժեք էր կազմակերպված:	(1)	(2)	(3)	(4)	(0)
13.	Համալսարանի ղեկավարությունն ու աշխատակազմն ինձ բարյացակամորեն են ընդունել՝ որպես նոր աշխատակցի:	(1)	(2)	(3)	(4)	(0)
14.	Ես ծանոթ եմ ԲՈՒՀ-իառաքելությանն ու ռազմավարությանը:	(1)	(2)	(3)	(4)	(0)
15.	Ես ծանոթ եմ իմ գործունեությանն առնչվող կանոնակարգերին:	(1)	(2)	(3)	(4)	(0)
16.	Իմ աշխատանքի նկարագիրը օբյեկտիվորեն արտացոլում է իմ աշխատանքային պարտականությունները:	(1)	(2)	(3)	(4)	(0)
17.	Իմ աշխատանքային ծանրաբեռնվածությունը համապատաս-խանում է սահմանվածին:	(1)	(2)	(3)	(4)	(0)
18.	Ես ունեմ բոլոր միջոցներն ու ռեսուրսները իմ աշխատանքը որակյալ և արդյունավետ կատարելու համար:	(1)	(2)	(3)	(4)	(0)
19.	Համալսարանի լաբորատորիաների հագեցվածությունը նպաս-տում է ուսումնառության արդյունավետության բարձրացմանը:	(1)	(2)	(3)	(4)	(0)

20.	Իմգիտելիքները և փորձառությունը համապատասխանում են իմաշխատանքին:	(1)	(2)	(3)	(4)	(0)
21.	Աշխատանքային գործունեությունս նպաստում է նոր գիտելիքների և հմտությունների ձեռքբերմանը:	(1)	(2)	(3)	(4)	(0)
22.	Համալսարանը հնարավորություններ է ընձեռում վերապատ-րաստման և մասնագիտական զարգացման համար:	(1)	(2)	(3)	(4)	(0)
23.	Համալսարանում ունեմ կարիերայի աճի հնարավորություն:	(1)	(2)	(3)	(4)	(0)
24.	Կարիերայի աճի և աշխատավարձի բարձրացման համար առկա են հավասար և արդար պայմաններ:	(1)	(2)	(3)	(4)	(0)
25.	Եսգոհ եմ իմաշխատավարձից և տրամադրվողայլ նյութական օժանդակություններից:	(1)	(2)	(3)	(4)	(0)
26.	Իմ աշխատավարձը համապատասխանում է իմ աշխատանքային պարտականություններին:	(1)	(2)	(3)	(4)	(0)
27.	Իմանմիջականղեկավարըկառուցողական և քաջալերողմոտեցումունիաշխատանքիսնկատմամբ:	(1)	(2)	(3)	(4)	(0)
28.	Ղեկավարսխրախուսում է երկուստեքիաղորդակցությունը:	(1)	(2)	(3)	(4)	(0)
29.	Իմաշխատանքին վերաբերող որոշումներիկայացման ընթացքում ունեմարտահայտվելուհնարավորություն:	(1)	(2)	(3)	(4)	(0)
30.	Իմ աշխատանքին առնչվող որոշումների մասին ժամանակին եմ տեղեկանում:	(1)	(2)	(3)	(4)	(0)
31.	Համալսարանին առնչվող ընդհանուր որոշումների մասին ժամանակին եմ տեղեկանում:	(1)	(2)	(3)	(4)	(0)
32.	Համալսարանում բոլոր աշխատակիցների հանդեպ հավասար և հարգալից վերաբերմունք է ցուցաբերվում:	(1)	(2)	(3)	(4)	(0)
33.	Առկա է թիմային աշխատանքի և համագործակցության ոգի:	(1)	(2)	(3)	(4)	(0)
34.	Խնդրահարույց հարցերը լուծվում են անաչառորեն:	(1)	(2)	(3)	(4)	(0)
35.	Համալսարանում որոշումների կայացման գործընթացը հասկանալի է և թափանցիկ:	(1)	(2)	(3)	(4)	(0)
36.	Համալսարանի ղեկավարության ջանքերը նպաստում են աշխատանքային պայմանների բարելավմանը:	(1)	(2)	(3)	(4)	(0)

37. Համալսարանում ինձ ամենից շատ դուր է գալիս (նշել2-ը)՝
    1. _____
    2. _____
38. Համալսարանում ես կառաջարկեի բարեփոխել /իրականացնել (նշել2-ը)՝
    1. _____
    2. _____
39. Գործունեությունս բարելավելու համար հետևյալ վերապատրաստումների կարիքն ունեմ (նշել 2-ը)՝
    1. _____

    _____

Հավելված 2.

Աղյուսակ 1. Վարչական անձնակազմի հարցման արդյունքների մասին ամփոփ տեղեկատվություն

11	Ընդհանուր առմամբ, ես բավարարված եմ համալսարանում իմ աշխատանքով և աշխատանքային պայմաններով:	1,46
12	Աշխատանքի ընդունվելիս, ինձ աշխատանքին նախապատրաստվելու գործընթացը լիարժեք էր կազմակերպված:	1,62
13	Համալսարանի ղեկավարությունն ու աշխատակազմն ինձ բարյացակամորեն են ընդունել՝ որպես նոր աշխատակցի:	1,21
14	Ես ծանոթ եմ ԲՈՒՀ-ի առաքելությանն ու ռազմավարությանը:	1,27
15	Ես ծանոթ եմ իմ գործունեությանն առնչվող կանոնակարգերին:	1,19
16	Իմ աշխատանքի նկարագիրը օբյեկտիվորեն արտացոլում է իմ աշխատանքային պարտականությունները:	1,40
17	Իմ աշխատանքային ծանրաբեռնվածությունը համապատասխանում է սահմանվածին:	1,59
18	Ես ունեմ բոլոր միջոցներն ու ռեսուրսները իմ աշխատանքը որակյալ և արդյունավետ կատարելու համար:	1,48
19	Համալսարանի լաբորատորիաների հագեցվածությունը նպաստում է ուսումնառության արդյունավետության բարձրացմանը:	1,49
20	Իմ գիտելիքները և փորձառությունը համապատասխանում են իմ աշխատանքին:	1,25
21	Աշխատանքային գործունեությունս նպաստում է նոր գիտելիքների և հմտությունների ձեռք բերմանը:	1,52
22	Համալսարանը հնարավորություններ է ընձեռում վերապատրաստման և մասնագիտական զարգացման համար:	1,81
23	Համալսարանում ունեմ կարիերայի աճի հնարավորություն:	1,89
24	Կարիերայի աճի և աշխատավարձի բարձրացման համար առկա են հավասար և արդար պայմաններ:	1,81
25	Ես գոհ եմ իմ աշխատավարձից և տրամադրվող այլ նյութական օժանդակություններից:	2,03
26	Իմ աշխատավարձը համապատասխանում է իմ աշխատանքային պարտականություններին:	2,01
27	Իմ անմիջական ղեկավարը կառուցողական և քաջալերող մոտեցում ունի աշխատանքիս նկատմամբ:	1,23
28	Ղեկավարս խրախուսում է երկուստեք հաղորդակցությունը:	1,14
29	Իմ աշխատանքին վերաբերող որոշումների կայացման ընթացքում ունեմ արտահայտվելու հնարավորություն:	1,18
30	Իմ աշխատանքին առնչվող որոշումների մասին ժամանակին եմ տեղեկանում:	1,31
31	Համալսարանին առնչվող ընդհանուր որոշումների մասին ժամանակին եմ տեղեկանում:	1,55
32	Համալսարանում բոլոր աշխատակիցների հանդեպ հավասար և հարգալից վերաբերմունք է ցուցաբերվում:	1,51
33	Առկա է թիմային աշխատանքի և համագործակցության ոգի:	1,52
34	Խնդրահարույց հարցերը լուծվում են անաչառորեն:	1,46
35	Համալսարանում որոշումների կայացման գործընթացը հասկանալի է և թափանցիկ:	1,54
36	Համալսարանի ղեկավարության ջանքերը նպաստում են աշխատանքային պայմանների բարելավմանը:	1,22